

Վ Ե Ր Զ Ի Ն Օ Ր Ը.

Եփրատի ափին դէմուդէմ եկած՝
 Զարկուում էին խիստ, զարկուում ու զարկուում
 Աննահանջ ու քաջ խըմբերը հայի
 Եւ քուրդն ու թուրքը կիտուած արենխում:
 Երբ որ յոգնեցին երկար զարկելուց,
 Երբ որ յոգնեցին բազուկներէ կուռ,

— «Հէյ, ընկեր, ասաւ խըմբապետն արի,
 Հէյ, ընկեր, ասաւ, բարձրացիր շուտով,
 Բարձրացիր Հայոց բարձրը լեռների
 Ամենից բարձր գագաթն ու նայիր,
 Ո՞րտեղ է, մի տես, վերջը թըշնամու...»
 Բարձրացաւ ջըլուտ հայդուկը հայի,
 Բարձրացաւ բարձրը գագաթը լեռան
 Ու յոգնած ձեռքը դրեց ճակատին.

— «Խըմբապետ, ասաւ, ընկեր խըմբապետ,
 Տեսնում եմ հեռու հորիզոնները մութ
 Եփրատի դալար հովիտներն ի վար՝
 Մինչև Տաւրոսի լեռները կապոյտ,
 Մինչև մըշուշուտ պարը Պոնտոսի,
 Մինչև բարձրաբերձ ժայռերը Մոկաց...
 Ծուխ է բարձրանում Մուշի հովիտից,
 Ծուխ է բարձրանում Սասմայ սարերից,
 Ծուխ է բարձրանում Վանայ կողմերից,
 Ծուխ է բարձրանում Աբաղայ դաշտից,
 Կրրակ է կանգնած Զէյթունի վըրայ...
 Ամեն կողմերից թշնամին գունդ-գունդ
 Շարժում է մեր դէմ, ու չի երևում,
 Չեմ տեսնում վերջը նըրա շարքերի...»

— «Հէյ, ընկեր, ասաւ խմբապետն այնժամ,
 Հէյ, ընկեր, ասաւ, ետ նայիր հտպա,

Ետ նայիր, մի տես, հայերը հեռւից
Ձե՛ն գալիս արդեօք մեզի օգնութեան...»
Ու յօգնած ձեռքը դրրեց ճակատին,
Կըտրիճ հայդուկը նայեց դէպի ետ.

— «Խմբապետ, ասաւ, ընկեր խմբապետ,
Տեսնում եմ ահա, ինչպէս ափիս մէջ,
Սև ծովից մինչև ծովը Վըրկանայ,
Մինչև Կովկասի պատնէշը ձիւնոտ.
Գալիս են խումբ-խումբ հայերը ճեպով,
Գալիս են ճեպով մեզի օգնութեան:
Իջնում են Սիւնեաց մութ-մութ սարերից,
Ելնում Գուգարքի խոր-խոր ձորերից,
Շիրակի դաշտից մինչև Այրարատ,
Ու ողջ ափերը Անուշ Արաքսի
Անվերջ տագնապով իրար են անցնում...
Գալիս են ամեն կողմից Կովկասի,
Գալիս են հեռո՛ւ, հեռու կողմերից,
Գալիս են կարօտ պանդուխտներն ամեն,
Գալիս են ցըրւած տըղերքը նորից,
Գալիս են՝ պարզած դըրօշն հայրենի...»

— «Հէյ ընկեր, ասաւ խմբապետը փորձ,
Հէյ, ընկեր, ասաւ, սուր աչք ունիս դու,
Նայիր դէպ հիւսիս, աւելի հեռու,
Ձի՛ շարժում արդեօք հիւսիսը հօր...»
Ու նայեց հայդուկն աւելի հեռու,
Նայեց սրատես աչքով արծւենի.

— «Խմբապետ, ասաւ, ընկեր խմբապետ,
Աչքըս չի կտրում՝ որտեղից մինչ ուր՝
Շարժում է, ահա, հիւսիսն ընդհանուր.
Յորձանք է տալիս ծովն ըռուսական,
Յորձանք է տալիս ծանր ու ահաւոր,
Դէպի ամեն կողմ—ափերն հեռաւոր.
Եւ, հուր ու շոգի շնչելով ուժգին,
Գընացքը կըտրած գընացքի ետև,

Ու, գալարեւելով հովիտից հովիտ,
Գալիս են, ինչպէս վիշապներ սև-սև...»

— «Հէյ, ընկեր, կանչեց խմբապետն արի,
Հէյ, ընկեր, կանչեց, դէ ցած եկ արագ,
Առ հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,
Իջիր Սըրբազան ասիւր Եփրատի.
Հին պատերազմի վերջին գարկն է սա,
Հին ոճրագործի հոգեարքն է սա...»

— «Խմբապետ, կանչեց, ընկեր խմբապետ,
Խմբապետ, կանչեց հայդուկը ջահել,
Հայոց երկնահաս լեռների վըրայ
Խո՞ր, խորհրդաւոր ձայներ են լսուում.
Գըրըդում է խուլ երկինքը վերից
Էն անհուն, անքուն, անթիւ ձայներից...»

— «Հէյ, ընկեր, կանչեց խմբապետը հին,
Հէյ, ընկեր, կանչեց, խաչ հան երեսիդ.
Էդ կեանքում տանջւած, տանջանքով մեռած
Անթիւ, անհամար, անբախտ հայերի
Հոգիներն են հէգ, որ լաց ու կոծով,
Արեան մըրրիկով երկինք վերացան,
Փոթորկում են դեռ Աստրծու դիմաց,
Բողոքում անհուն երկընքովը մին.
Նըրանց բողոքի աղմուկն է անլուռ,
Հասնում է ներքե՛ հայի ականջին...
Հէյ, ընկեր, ասաւ, խաչ հան երեսիդ,
Առ հըրացանըդ, դաշտն իջիր շուտով,
Իջիր Սըրբազան ասիւր Եփրատի, —
Մե՞ծ տառապանքի վերջին օրն է սա...»

Յովն. Թումանեան

«Հորիզոն»

